«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Նորագույն Տեխնոլոգիաները Օտար Լեզվի Դասավանդման Մեթոդների Մեջ

ԱՌԱՐԿԱ՝ Անգլերեն

ՀԵՂԻՆԱԿ՝ Նարե Մարգարյան

ՄԱՐԶ՝ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝

Ռյա Թազայի Ա. Ավդալի անվ. միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՋ 4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Սույն հոդվածը միտված է հետազոտելու, բացահայտելու դասավանդման մեթոդների լայն շրջանակ, որոնք հարմար են տարբեր դասարաններում գործածելու համար:

Ուսուցման ռազմավարությունը հնարավոր է դարձնել բազմազան՝ դասարանում տեղեկատվական տեխնոլոգիաները ինտեգրելով:

Նման դասավանդման մեթոդները կօգնեն փորձ և գիտելիք ձեռք բերելու և ուսուցումը արդյունավետ դարձնելու համար:

Հոդվածում առկա են բազմաթիվ նորագույն մեթոդներ, որոնք արդյունավետ են դասարանում օգտագործելու համար:

Բոլոր այս մեթոդները պահանջում են նախապատրաստական մանրակրկիտ աշխատանք:

Հետազոտական աշխատանք կատարելու նպատակները.

- Զարգացնել նորագույն մեթոդների կիրառումը դասի ընթացքում
- Կատարելագործել աշակերտների կողմից խմբային, անհատական մեթոդների կիրառմանն հմտությունները:
- Բարձրացնել ուսուցման և ուսումնառության որակը, բարձրացնել աշակերտների հետաքրքրությունը և մասնակցությունը դասապրոցեսին:

Նպատակ և խնդիրներ.

1. Երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում
2. Բանավոր խոսքի զարգացում
3. Ինքնաարտահայտվելու զարգացում
4. Նախաձեռնելու, համախմբված աշխատելու կարողություն
5. Իրավիճակը շտկելու կարողություն
6. Բարդույթներից ձերբազատում

Բանալի բառեր՝ ուսումնական պլան, արդյունավետ ուսուցիչ, նորագույն տեխնոլոգիաներ, համագործակցային ուսուցում, հասկացություն, հաղորդակցություն, կարողություն, տեղեկատվական աղբյուր, բազմազան գործունեություններ, սահիկաշարք, հետադարձ կապ, նորությունների հեռարձակում:

Որպեսզի կազմակերպման տարբեր եղանակներն արդյունավետ լինեն, ուսուցիչը պետք է ծանոթ լինի նշված հասկացություններին, գիտենա, թե ինչպես են դրանք օգտագործվում, տեղյակ լինի, թե ինչպիսի առավելություններ է տալիս դրանց կիրառումը, ինչպես նաև պետք է կարողանա կարգավորել այն խնդիրները, որոնք կարող են ծագել դասավանդման գործընթացում:

Introduction

New technologies in teaching methodologies. The article is aimed at a vast range grades. Diversity your teaching strategies by implementing service – learning projects and integrating technology in your classroom. These resources will help you gain the experience and expertise to become a successful teacher. It describes new methods of teaching. There are many different Lesson Methodologies which you can effectively use. All of them require a lot of preparatory work.

Objectives of research work.

1. Develop the application of the latest methods during the lesson.
2. To improve student's skills in applying group – individual methods.
3. To increase the quality of teaching and learning, to increase student's interest and participation in the classroom process.

Goal and objectives.

1. Development of the child's creative imagination.
2. Development of oral speech.
3. Development of self – expression.
4. Ability to initiate, to work together.
5. Ability to correct the situation.
6. Getting rid of complications.

Keywords: curriculum, effective teacher, new technology, collaborative learning, concept, communication, capacity, information source, homogeneous structure, diverse activities, slide, retrogressive connection, news broadcast.

In order for the different methods of organization to be effective, the teacher must be familiar with the mentioned concepts, know how they are used, be aware of the advantages of their application , and also must be able to solve the problems that may arise in the teaching process.

1.Ինքնուրույն աշխատանք

Այս դեպքում աշխատանքը կարող է կատարվել ինքնուրույն: Այ կարգի աշխատանքի նպատակն է, որ աշակերտներն ինքնուրույն աշխատեն:

Առաջադրանքները չենք առանձնացնում՝ հաշվի առնելով առանձին անհատների պահանջները, բոլորը միևնույն առաջադրանքն են կատարում:

2. Զույգերով աշխատանք

Զույգերով աշխատանքի ընթացքում, նույն ընդունակություններով երկու աշակերտ աշխատանքը կատարում են իրար հետ համագործակցելով, քննարկում են նյութը և գալիս մի ընդհանուր հայտարարի:

3.Խաչբառների լուծումը

Խաչբառների լուծումը պահանջում է բազմաթիվ կարևոր հմտություններ, որոնք ներառում են բառարան, ուղղագրություն: Այն համարվում է ակտիվ ուսուցում և շատ աշակերտների է ներառում դասապրոցեսի մեջ՝ զարգացնելով ակտիվ բառապաշարը:

Օրինակ՝. Անգլերենի դասաժամին գույների, մրգերի, հագուստների անունները սովորելիս ուսուցչուհին կազմում է խաչբառ տրված նոր բառացանկով:



4.Անհատական աշխատանք

Յուրաքանչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ: Այս փաստը պետք է հաշվի առնել որևէ առաջադրանք տալուց առաջ ր և բնականաբար գնահատման ժամանակ: Աշակերտի անհատական ընդունակությունները զարգացնելու համար կազմված ծրագիրը կոչվում է **անհատականացում:**

Այս մեթոդը օգտակար է շնորհալի երեխաների հետ աշխատելիս, կամ երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Կարելի է կիրառել շերտավոր ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ժամանակ է հատկացնում թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին, իսկ լավ սովորողներին հանձնարարում է ինքնուրույն աշխատանք:

Օրինակ՝. Լավ սովորողներին երկու կամ երեք վարժություն այլ դասագրքից, իսկ թույլերին հիմնական դասագրքից:

5.Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը հաջողված մեթոդ է, որի միջոցով գերազանց հաղորդակցություն է լինում սովորողների միջև և ստեղծում է ակտիվ թիմային աշխատանք:

Համագործակցային ուսուցումը դրսևորում է փոք թիմերով, որտեղ տարբեր մակարդակի աշակերտներ են մասնակցում և կիրառում են իրենց գիտելիքները:Խմբում յուրաքանչյուրաշակերտ կարևոր է:

6.Աշակերտներին զբաղված պահելու համար նախատեսված վարժությունների տեսակները

Հատկապես տարրական դասարաններում հարմար է աշակերտներին սովորեցնել խաղերի միջոցով: Խաղը պետք է լինի մատչելի տարիքին և գիտելիքներին համապատասխան:

Այս մեթոդը հարմար է ցանկացած տարիքի աշակերտների համար, դրդապատճառ է դառնում, որ աշակերտները ակտիվ լինեն:

Աշակերտներից պահանջվում է հանելուկներ հորինել, գուշակել, փնտրել համցանցում նոր նյութը լրացնող խաղերը, հետաքրքրաշարժ վարժությունները ավելի են ամրապնդում նոր նյութը:

Աշակերտին տրվող վարժությունները պետք է լինեն`կարճ, խաղային և հետաքրքիր:

Օրինակ`. Գրատախտակի վրա գրել աշխարհագրական անուններ, որոնց վերջնատառը պետք է լինի նոր բառի սկզբնատառը:

Գրել երկրների, տեսարժան վայրերի անուններ: Կհաղթի այն շարքը, որը ավելի շատ բառ կգրի:

7.Դերախաղը՝ որպես ուսուցման եղանակ

Դերախաղը արժևորված մեթոդ է, որը խրախուսում է աշակերտներին ավելի լավ գիտելիքներ ձեռք բերել:

Աշակերտները դեր են խաղում՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում: Համաձայն ավանդական տեսակետի, դերախաղը խաղ է, որը պետք է անցկացնել թեման ավարտելուց հետո. ավելին, անհնար է որևէ բան ներկայացնել,երբ աշակերտները դեռևս չեն յուրացրել տվյալ նյութը:

Լինում են նաև դեպքեր, երբ դերախաղը դառնում է աշակերտների համար անհետաքրքիր, երբ արդեն հայտնի է, թե նրանք ինչպես պետք է գործեն:

Օրինակ՝. Անգլերենի դասաժամին նոր բառեր սովորելիս <<խանութի անունները>> 5 դասարանի աշակերտները ներկայացնում են փոքրիկ դերախաղ հանրախանութում՝ գնումներ կատարելիս և նոր բառերը կիրառելով:

Կամ <<Մոխրոտիկ>> հեքիաթը ներկայացնում են պարահանդես բեմադրելով:

8.Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը

Պետք է աշակերտներին սովորեցնել թե ինչպես կիրառեն Տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնցից են համացանցը, հեռուստածրագրերը: Համակարգիչները կարող են օգնել օտար լեզուները դասավանդելիս և առհասարակ այլ առարկաների դասավանդման ժամանակ:

Տեսահոլովակները նույնպես օգնում են նյութը լավ ընկալելու և շարադրելու համար:

Համացանց.

Օրինակ՝1. Հայտնի մարդկանց կյանքի մասին տեղեկություններ իմանալու և անձնական կյանքը նկարագրելու համար կարելի է կիրառել հարցերի ձևեր: Ուսուցիչը պատրաստում է կարճ թեստեր հայտնի մարդու կյանքի մասին: Աշակերտները կատարում են թեստային աշխատանքը՝ որոնելով տեղեկությունները համացանցում: Թեստն ավարտելուց հետո ամբողջ դասարանը ստուգում է պատասխանները:

9. Լրացուցիչ աշխատանքներ

Աշակերտներին լրացուցիչ աշխատանք է տրվում, որը կատարելու համար աշակերտները կարող են որոնել տեղեկություններ և նկարներ իրենց քաղաքի, գյուղի մասին և այդ տեքստը թարգմանել պահանջված լեզվով:

Թարգմանության համար թույլատրվում է օգտվել համացանցում առկա բառարաններից:

10. Ֆիլմեր և տեսանյութեր

Օտարլեզու, կարճամետրաժ ֆիլմերը օգնում են աշակերտներին խոսելու պարզ և ճիշտ արտասանությամբ:

Օրինակ՝. Ավագ դասարանում կարող են դիտել <<Արթուր թագավորի>> մասին ֆիլմը և այն քննարկեն հաջորդ դասաժամին:

11. Լրագրության ժանրերի կիրառումը

Համացանցում պետք է գտնել մամուլում տեղ գտած նորությունները, հարցազրույցները և քննադատությունները: Այս հոդվածները պետք է ներբեռնել և նշել դրանց աղբյուրները:

Այնուհետև կատարել տեքստերի վերլուծում:

Օտարլեզու ամսագրեր.

Օգտագործել օտարլեզու ամսագրեր կամ այլ ամսագրեր առարկային համապատասխան:

Թույլ տալ սովորողներին ընտելու այն հոդվածն, որը նրանց ավելի շատ է հետաքրքրում, ընթերցելու հնարավորություն տալ մի քանի աշակերտի, ովքեր էլ հետագայում կզեկուցեն ամբողջ դասարանին:

12. Սահիկաշարքերի (slides) օգտագործումը

Շատ ուսուցիչներ օգտագործում են սահիկաշարք դասապրոցեսի ժամանակ: Այն նախապես պետք է կառուցված լինի դասի թեմային համահունչ: Դա ավելի հեշտ է կիրառելը քան անընդհատ գրատախտակին գրելը: Այն պետք է հնարավորինս պարզ և մատչելի պատրաստել:

Կարևոր միտքը շեշտելու համար կարելի է գույներ օգտագործել (կարմիր, նարնջագույն):

Կարելի է պատրաստել աղյուսակներով, դիագրամներով: Յուրաքանչյուր սահիկաշարք պետք է ունենա սկիզբ, մեջտեղ, ավարտ և տևի 15-20 րոպե: Աշակերտների ուշադրությունը գրավելու համար պետք է հաճախակի փոխել մեթոդները:

Օրինակ՝. Կարելի է պատրաստել սահիկաշարք <<Անգլիայի տեսարժան վայրերը>> վերնագրով: Ուսուցչուհին ցույց կտա մեկնաբանելով:

13. Աշխատանքային թերթիկների միջոցով աշխատանք

Թերթիկները պետք է կազմել 3 մակարդակով ՝ ուժեղ, միջին և թույլ աշակերտների համար: Աշխատանքային թերթիկները կազմելիս կարելի է օգտագործել գունավոր մատիտներ, տարբեր նկարներ պատկերել: Կարևոր է պահել չափը: Կարելի է այս աշխատանաքը հանձնարարել որ երեխաները իրենք կազմեն քարտերը:

Աշակերտները քարտերի վրա գրում են այն ածականները, որոնք, նրանց կարծիքով նկարագրում են իրենց, սակայն քարտերի վրա չեն նշում իրենց անունները:

Այնուհետև նրանք սկսում են դասարանում բաժանել քարտերը և կարդալ ածականները: Նրանք կռահում են, թե ով կարող է լինել այդ անձը և քարտի հետևի մասում գրում անունը, այնուհետև փոխանցում են այն հաջորդ աշակերտին: Վերջում բոլորը միասին քննարկում են, թե արդյոք իրենց ճիշտ են կռահել:

14. Լուսանկարների օգտագործում

Լուսանկարների օգտագործումը զարգացնում է երևակայությունը: Կարող ենք յուրաքանչյուր աշակերտի մեկ լուսանկար հատկացնել: Սա հիմնականում կիրառվում է շարադրությունների ժամանակ, որի հիմքը լուսանկարն է հանդիսանում, նպատակն է զարգացնելու հեղինակային, նկարագրողական և համոզիչ շարադրություն գրելու կարողությունները:

1. Խոսելու կարողությունները զարգացնող լեզվական խաղեր

Ձնագունդ

Առաջարկվում է մի որևէ աշակերտի կազմել մի պարզ ընդարձակ նախադասություն: Երկրորդ աշակերտը պետք է կրկնի առաջին աշակերտի նախադասությունը և ավելացնի իրենը և այսպես շարունակ: Ստացվում է այնպես, որ վերջին աշակերտը հանպատրաստից հորինված մի ամբողջ պատմություն է պատմում: Խաղը օգնում է մենախոսության կարողություների զարգացմանը:

Օրինակ՝ The first student: “Last summer I went to the forest with my family’’.

The second student: “Last summer I went to the forest with my family’’ we pick a flowers

there.

Եվ այսպես շարունակ...

Կենդանի բառարան

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Յուրաքանչյուր խումբ ընտրում է իր ավագին, ով համեմատաբար լավ է կարողանում անգլերենով մտքեր արտահայտել: Ուսուցիչը ավագներին է տալիս նախօրոք պատրաստված անգլերենով գրված հինգական բառերի ցուցակ:Ավագը պետք է, իր խմբին այնպես բացատրի բառը, որ խումբը կռահի այն ու այդ բառերը արտահայտի անգլերեն: Ավագներին չի թույլատրվում ցույց տալ առարկա կամ նկար: Պարտվում է այն թիմը, որը ավելի քիչ բառ է կարողացել գուշակել: Խաղի գերխնդիրը անգլերենով հասկացված լինելն է:

Թերություններ և առավելություններ

Դասարանը բաժանվում է երկու խմբի:

Ուսուցիչը ներկայացնում է որոշ մտքեր օրինակ՝. համակարգչային խաղեր, հեռուստահաղորդումներ, հանգիստը բնության գրկում, արագ սնունդ:

Մի խումբը պետք է ներկայացնի գաղափարի դրական կողմերը, մյուս խումբը `բացասական:

Բանջարեղենային աշխարհ

Ուսուցիչը գրատախտակին գրում է 5 բանջարեղենի անուն և այդ բանջարեղենի անունները կռահելու համար կազմված 10 հարց:



Օրինակ՝. 1. potato 2. tomato 3. cabbage 4. cucumber 5. cauliflower

1. Can it be boiled ?
2. What colour is it ?
3. It is countable or uncountable ?
4. How big it is ?

etc...

2.Գրելու կարողությունները զարգացնող լեզվական խաղեր

Դասարանական պայմանագիր

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Մի խումբը գրում է ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, իսկ մյուս խումբը՝ աշակերտի: Այսպիսով ստեղծվում է դասարանական պայմանագիր:

Տնտեսում և խնայում

Դասարանը բաժանվում է զույգերի: Յուրաքանչյուր զույգ պետք է գրի, թե ինչպես կարելի է կրճատել հոսանքի, գազի, ջրի վարձերը ամենախելամիտ ձևերով: Վերջում զույգերը ներկայացնում են իրենց գրավոր առաջարկությունները:

Հրավերքի մերժում կամ ընդունում

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Յուրաքանչյուր խմբի առաջարկվում է Մերժման կամ ընդունման պատասխան նամակ գրել, երբ հրավիրված են խնջույքի, ժողովի, մի որևէ հարցի քննարկման: Վերջում խմբերը կարդում են իրենց Մերժման կամ ընդունման նամակները:

Տեքստի ավարտում

Տրվում է տեքստի սկիզբը մի քանի նախադասությամբ: Աշակերտները պետք է ավարտեն այն օգտվելով տրված բառերից և բառակապակցություններից:

Նմանատիպ օրինակներից են նաև նամակ, տեղեկանքի, ինքնակենսագրության, պայմանագրի գրելը:

Conclusion

Teaching English at school with the latest technology helps make learning meaningful and more interesting. The learner acquires the ability to use foreign language sources, to express his own opinion orally and in writing, and to expand his horizons. Learning is personalization to his own abilities and at his won speed of assimilation of material.

Thus, the use of the latest technologies in the teaching process makes the teacher's work easier. These are the best ways to achieve our goals.

The use of information technologies in classes contributes to the effectiveness of teaching, increases the individual language abilites of studens, cognition, opportunities to use alternative and interconnected methods. The teacher is to support the student, to promote the development of independent work skills, which will lead to the development of the student's creative and initiative abiliaties.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում անգլերենի ուսուցումը նորագույն տեխնոլոգիաներով օգնում է իմաստավորել և ավելի հետաքրքիր դարձնել ուսումնական պարապունքները: Սովորողը ձեռք է բերում օտարլեզու աղբյուրներից օգտվելու, բանավոր և գրավոր ձևով սեփական կարծիքը արտահայտելու կարողություն, մտահորիզոնի ընդլայման լայն հնարավորություն:

Ուսուցումն անհատականացվում է: Յուրաքանչյուր սովորող աշխատում է ըստ իր ընդունակությունների և նյութի յուրացման իր արագությամբ: Այսպիսով նորագույն տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման գործընթացում ավելի է հեշտացնում ուսուցչի աշխատանքը: Սրանք մեր առջև դրված նպատակներին հասնելու լավագույն միջոցներն են:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասերին նպաստում է ուսուցման արդյունավետությունը, մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունները, Ճանաչողությունը, այլընտրանքային և փոխկապակցված մեթոդների կիրառման հնարավորությունները:

Ուսուցիչը դադարում է գիտելիքի հաղորդման միակ աղբյուրը լինելուց, իսկ ուսուցչի հիմնական խնդիրն է աջակցել աշակերտին, խթանել ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացումը, որը հանգեցնելու է աշակերտի ստեղծագործական և նախաձեռնողական կարողությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Ղրիմյան, Ս. Խաչատրյան,

Ն. Բայաթյան, Լ. Ալեքսանյան, Վ. Պուրուկուրու Համագործակցային ուսուցում

2. 3. http://www.lern.org/blog/2014/12/02/top-10-new-teaching-techniques-for-2015/

3. http://teaching.uncc.edu/learning-resources/articles-books/best-practice/instructional-methods/150-teaching-methods

4. http://academia.stackexchange.com/questions/in-teaching-what-are-the-advantages-of-using-slides-over-doing-board-work

5. http://www.weareteachers.com/blogs/post/2015/04/08/21-ways-to-use-photos-in-the- 6. classroom https://www.teachingenglish.org.uk/article/activities-using-magazines-classroom

7. Lewis, P. (1997). Using productivity software for beginning language learning÷Part 1. The word processor. Learning and Leading with Technology

8. http://www.onestopenglish.com/methodology/methodology/teaching-materials

9. http://teachervision.com/teaching-methods/resource